ԴեաԼՈԳ-ը Հայաստանում

Տեղեկագիր N. 1

Հունվար – հունիս 2023

«Աջակցություն Հայաստանում ապակենտրոնացմանն ու տեղական ինքնակառավարման բարեփոխումներին» ծրագիրն իրականացվում է 2022-2026 թվականներին Շվեդիայի Տեղական իշխանությունների և տարածաշրջանների ասոցիացիայի (ՍԱԼԱՐ) դուստր կառույց ՍԱԼԱՐ Ինթերնեշնլի կողմից՝ Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալության (Սիդա - Sida) ֆինանսավորմամբ:

Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ կառավարությանը տեղական ժողովրդավարության ձևավորման և ամրապնդման, համայնքային ներգրավվածության, հասարակարգի զարգացման ներուժի, ծառայությունների մատուցման, Շվեդիայի տեղական ինքնակառավարման մարմինների երկարամյա պատմության և «SALAR International»- ի համաշխարհային համագործակցության փորձի և համագործակցության հիման վրա: Ծրագիրը նաև հանդիսանում է Դիմացկուն Սյունիք Թիմ Եվրոպա նախաձեռնության մաս, որը մեկնարկել է 2023 թվականի հունվարին նպաստելու համար Սյունիքի մարզի կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը: Այն Եվրամիության, Եվրոպական ներդրումային բանկի և ԵՄ անդամ երկրների՝ Ավստրիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Լեհաստանի և Շվեդիայի համատեղ նախաձեռնությունն է, որին միացել է նաև Շվեյցարիան՝ որպես արտաքին **գործընկեր:**

Զատագովություն և քաղաքականության երկխոսություն

Հունվար-մարտ ամիսներին ԴեաԼՈԳ ծրագիրը մի շարք հանդիպումներ և քննարկումներ անցկացրեց մի շարք գործընկերների հետ: Ծրագրի թիմը հանդիպեց Հայաստանի մանուկներ հիմնադրամի (ՔՈԱՖ) և Դասավանդիր Հայաստան-ի ներկայացուցիչների հետ՝ քննարկելու Հայաստանի տարբեր մարզերում կրթության ոլորտում իրենց գործունեությունը, ինչպես նաև Սյունիքում իրենց ծրագրերը: Թիմը հատկապես հետաքրքրված էր լսել վերջիններիս տեսլականը դպրոցական համակարգի հնարավոր վերափոխման գործում և այն մասին, թե ինչպես են նրանք տեսնում համայնքների դերը դպրոցի կյանքում: Ե՛վ ՔՈԱՖ-ը, և՛ Դասավանդիր Հայաստանը ներկայացրեցին անցած տարիների ընթացքում իրենց աշխատանքի արդյունքները: Փետրվարին ՍԱԼԱՐ Ինթերնեշնլ-ի ներկայացուցիչները և ծրագրի թիմը հնարավորություն ունեցան այցելել նաև Դեբետում գտնվող ՔՈԱՖ Սմարթ Կենտրոն, որն աջակցում է Դեբետի և շրջակա գյուղերի երեխաների ուսումնական գործընթացներին: Այցի ընթացքում առանձին հանդիպում տեղի ունեցավ Փամբակ համայնքի Դեբետ բնակավայրի ղեկավար տիկին Անուշ Սարգսյանի հետ: Հանդիպման հիմնական նպատակն էր հասկանալ ՔՈԱՖ-ի, բնակչության և համայնքի կառավարման միջև հաղորդակցման և փոխկապակցվածության ձևերը:

Փետրվարին ԴեաԼՈԳ թիմն այցելել է Հայաստանի հյուսիսում գտնվող մի քանի համայնքներ: Թիմը հանդիպել է Ալագյազի եզդիաբնակ համայնքի ղեկավարի և Թումանյան համայնքի ղեկավարի հետ: Քննարկման հիմնական թեմաներն էին համայնքներում առկա իրավիճակը, նրանց իրազեկվածությունն ու քաղաքական երկխոսություններին ներգրավումը Հայաստանում՝ տեղական ինքնակառավարման և ապակենտրոնացման հետագա զարգացումների շուրջ:

Փետրվարի 15-ին՝ ԴեաԼՈԳ ծրագիրը հանդիպել է Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) հետ: Հանդիպման նպատակն էր ներկայացնել և համաձայնեցնել 1-ին փուլի ծրագրային միջամտությունները և քննարկել հետագա համագործակցությունը:

Շվեդիա Sverige SALAR International
A part of the Swedish Association of Local Authorities and Regions

Մարտի կեսին ծրագրի թիմը այցելեց Սյունիքի մարզ և հանդիպումներ անցկացրեց Սիսիանի, Տաթևի, Տեղի և Կապանի համայնքներում քննարկելու համար մարտահրավերները ՏԻՄ-երում, համայնքների տեսլականն ու ակնկալիքները ապակենտրոնացման շուրջ, տեղական ժողովրդավարությունը և քաղաքացիների մասնակցությունը: Այցի շրջանակում թիմը հանդիպումներ է ունեցել նաև Սյունիքի մարզպետարանի հետ և քննարկել դպրոցական ցանցի կառավարմանն ու դրա հնարավոր հետագա ապակենտրոնացմանն առնչվող հարցեր:

Ապրիլի 12-ին ՍԱԼԱՐ Ինթերնեշնլը հանրությանը ներկայացրեց իր առաջին ԴեաԼոԳ ծրագիրը պաշտոնական բացման միջոցառման ժամանակ: Բացման միջոցառման մասնակիցների թվում էին Ծրագրի հիմնական գործընկերները Հայաստանում և տեղական ինքնակառավարման և ապակենտրոնացման բարեփոխումների շահագրգիռ կողմերը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ոլորտային այլ նախարարություններ, Ազգային ժողովը, բոլոր խոշորացված համայնքները, ինչպես նաև միջազգային զարգացման գործակալություններ, հետազոտական կենտրոններ և ՔՀԿ-ներ, որոնք ակտիվ են տեղական կառավարման ոլորտում:

Բացման միջոցառումը նպատակ ուներ համախմբել ԴեաԼոԳ ծրագրի բոլոր պոտենցիալ շահագրգիռ կողմերին ու շահառուներին և ներկայացնել նրանց Ծրագրի հիմնական ուղղությունները և ակնկալվող արդյունքները: Միջոցառումը նաև հարթակ բացեց բարեփոխումների հիմնական շահագրգիռ կողմերի միջև երկխոսության և մտքերի փոխանակման համար:

Միջոցառման ընթացքում բացման խոսքով և զեկուցումներով հանդես եկան Հայաստանում Շվեդիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Պատրիկ Սվենսոնը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների փոխնախարար Վաչե Տերտերյանը, ՍԱԼԱՐ Ինթերնեշնլի գործադիր տնօրեն պարոն Ռայան Նոքսը և ՍԱԼԱՐ Ինթերնեշնլի ավագ խորհրդական պարոն Մագնուս Լիլյեսթրոմը: Բոլոր բանախոսներն ընդգծեցին ուժեղ, տոկուն և ինքնուրույն տեղական իշխանություններ ունենալու կարևորությունը: Ելնելով Հայաստանի տարածքային բարեփոխումների վերջին ձեռքբերումները՝ պահը չպետք է կորցնել և հետագա ապակենտրոնացման բարեփոխումների ներդրման կարևորությունը պետք է ընկալվի գործընթացի բոլոր շահագրգիռ կողմերի կողմից:

Ծրագրի շնորհանդեսին հաջորդեց տեղական կառավարման ոլորտում շվեդական փորձի ակտիվ փոխանակումը և պանելային քննարկումը ԴեաԼոԳ ծրագրի հիմնական թիրախային խմբերի ներկայացուցիչների միջև: Բացման միջոցառման օրը տեղի ունեցավ աշխատաժողով շուրջ 40 համայնքների ներկայացուցիչների հետ: Համայնքների ներկայացուցիչները հրավիրվել էին իրենց կարծիքը հայտնելու հետևյալ ոլորտներում ապակենտրոնացման հնարավորությունների վերաբերյալ.

- Ֆիսկալ ապակենտրոնացում
- Հանրակրթության կառավարում
- Առողջապահության ապահովում
- Սոցիալական ծառայությունների մատուցում
- Ճանապարհների սպասարկում
- Համագործակցություն և համակարգում ՏԻՄ-երի և կենտրոնական մակարդակի իշխանությունների միջև, հավաքական ձայն, ՏԻՄ-ի դերը:

Արդյունքում համայնքների ներկայացուցիչներն իրենց համայնքների անունից ձևակերպեցին հիմնական մարտահրավերները և ապակենտրոնացման հնարավոր առավելությունները:

Ապրիլի 13-14-ը ՍԱԼԱՐ Ինթերնեշնլի ներկայացուցիչներն այցելեցին Սյունիք և հանդիպեցին Կապանի համայնքապետի և Սյունիքի մարզպետի տեղակալի հետ: Կողմերը քննարկեցին Սյունիքի մարզի համայնքներում առկա իրավիճակը և ԴեաԼոԳ ծրագրի հնարավոր աջակցությունն ու համագործակցությունը, ի թիվս այլոց, նաև Դիմակայուն Սյունիք Թիմ Եվրոպա նախաձեռնության շրջանակներում:

Շվեդիա Sverige

SALAR International
A part of the Swedish Association of Local Authorities and Regions

Մայիսի 1-2-ին Ծրագրի թիմն այցելեց Գորիսի և Տաթևի համայնքապետարաններ՝ քննարկելով ներկա իրավիճակը և տեղական ինքնակառավարման հիմնական մարտահրավերները: Բացի այդ, կողմերը մտքեր փոխանակեցին դպրոցների կառավարման, ինչպես նաև համայնքային կյանքում դպրոցի դերի վերաբերյալ: Այդ հանդիպումների արդյունքներով ներկայացվել և կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համաձայնեցվել է դպրոցների կառավարման ապակենտրոնացմանն աջակցության նախնական փաթեթ:

Մայիսի 18-ին ԴեաԼոԳ ծրագիրը Դիմակայուն Սյունիք Թիմ Եվրոպա նախաձեռնության շրջանակներում մասնակցել է Եվրոպայի օրվա տոնավաճառին, որն անցկացվել է Կապանում: Թիմը ծրագիրը ներկայացրեց տոնավաճառի այցելուներին, որոնք հիմնականում Սյունիքի մարզից էին: Ընդհանուր առմամբ, Եվրոպայի օրը ցուցադրում էր ավելի քան 20 տարբեր ծրագրեր և դրանց առավելությունները սյունեցիների համար: Այցելուները հնարավորություն ունեցան նաև ծանոթանալու Սկանդինավյան և Բալթյան երկրների և Լեհաստանի փորձին, որը մանրամասն ներկայացված էր ՍԱԼԱՐ Ինթերնեշնլի ամենահայտնի հրապարակումներից մեկի միջոցով:

Մայիսի 29-ից հունիսի 1-ը Հայաստանի պատվիրակությունը՝ բաղկացած ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության բարձրաստիճան պաշտոնյաներից (Վաչե Տերտերյան, փոխնախարար, Աշոտ Գիլոյան, Տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ), ՀՀ Ֆինանսների նախարարություն (պարոն Արման Պողոսյան, փոխնախարար), Ազգային ժողով (ԱԺ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ պարոն Վահե Ղալումյան), ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (Ընդհանուր և արտադպրոցական ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ տիկին Սուսաննա Ազատյան) և ՀՀ փոխվարչապետ պարոն Մհեր Գրիգորյանի գրասենյակը (գրասենյակի ղեկավար Էդգար Մկրտչյան և խորհրդական Վիկտորյա Այդինյան) այցելեցին Ստոկհոլմ ճանաչողական և աշխատանքային այցի համար: Պաշտոնական այցի շրջանակում ստորագրվել է փոխըմբռնման երկու հուշագիր՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Շվեդիայի Տեղական իշխանությունների և տարածաշրջանների ասոցիացիայի (ՍԱԼԱՐ) և ՍԱԼԱՐ Ինթերնեշնլի և ՀՀ ֆինանսների նախարարության, ՍԱԼԱՐ-ի և ՍԱԼԱՐ Ինթերնեշնլի միջև:

Հունիսի 18-22-ը Շվեդիա այցելեց հայկական երկրորդ պատվիրակությունը՝ կազմված Հայաստանի ինը համայնքապետարանների (Տաթև, Վայք, Մասիս, Արթիկ, Ապարան, Իջևան, Փամբակ, Հրազդան, Վաղարշապատ) որոշում կայացնողներից:

Ուսումնական և աշխատանքային այցերի ընթացքում պատվիրակությունները հնարավորություն ունեցան ավելի խորը պատկերացում ձևավորել այն մասին, թե ինչպես է գործում ապակենտրոնացված պետական կառավարումը գործնականում Շվեդիայում, քաղաքական, վարչական և հարկաբյուջետային ապակենտրոնացման շվեդական իրականության մեջ կառավարության տարբեր շերտերի ներսում և միջև պատասխանատվության բաշխման վերաբերյալ՝ Շվեդիայի տեղական ինքնակառավարման մարմինների դերի և տեղի մասին ընդհանուր պետական կառավարման շրջանակում և ծառայությունների մատուցման, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքների գործնականում կիրառման, վստահության և հաշվետվողականության հիմնախնդիրների, մունիցիպալ վերահսկողության, հարկաբյուջետային ապակենտրոնացման, ներառյալ եկամուտների բաշխման, ֆինանսական համահարթեցման համակարգի, ուժեղ հարկաբյուջետային բազայի և ազատորեն տնօրինվող եկամուտների համայնքների օգուտների մասին, հատկապես տնտեսական զարգացման համար, ապակենտրոնացման համար կարևոր հիմնական ոլորտներում ապացույցների վրա հիմնված քաղաքականության ձևավորման և պլանավորման վրա և այլն:

Շվեդիա Sverige

SALAR International
A part of the Swedish Association of Local Authorities and Regions

Rondine Cittadella della Pace կազմակերպած Youtopic Fest միջոցառման շրջանակներում Ծրագրի համակարգող Արծրուն Պիվազյանը ելույթ ունեցավ Հայաստանում ՍԱԼԱՐ Ինթերնեշնլ-ի աշխատանքի վերաբերյալ «Խաղաղություն, քաղաքականապես ցանկալի» պանելային քննարկման շրջանակներում:

Ֆիսկալ ապակենտրոնացում

Փետրվարին, հարկաբյուջետային ապակենտրոնացման բաղադրիչի շրջանակներում, ԴեաԼոԳ ծրագիրը մեկնարկել է Հայաստանում հարկային քաղաքականության ելակետային ուսումնասիրություն՝ կենտրոնանալով անձնական եկամտահարկի (PIT) և տեղական բյուջեի հարկային եկամուտների վրա: Ուսումնասիրությունն իրականացվում է Համայնքների ֆինանսների միավորման (CFOA) հետ համագործակցությամբ: Զեկույցի արդյունքները հասանելի կլինեն հանրությանը:

Մարտ ամսից ԴեաԼոԳ ծրագիրն աջակցում է ՀՀ Ֆինանսների նախարարությանը հատուկ սուբվենցիաների տրամադրման կանոնակարգերի մշակման գործում՝ ուղղված համայնքներում մասնակցային մեխանիզմների հետագա զարգացմանը (մասնակցային բյուջետավորման գործիքների կիրառում): Նախատեսվում է, որ այս սուբվենցիաներիի համար համայնքները կկարողանան դիմել 2024 թվականից սկսած:

Կրթության ոլորտ

Մարտին ԴեաԼոԳ թիմն ունեցավ իր առաջին պաշտոնական հանդիպումը ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ՝ քննարկելով դպրոցական ցանցի կազմակերպման և կառավարման ոլորտում մեր հնարավոր միջամտությունն ու աջակցությունը, և վերջինիս հետագա ապակենտրոնացումը:

Ծրագրի մեկնարկից ի վեր մեր առաջին ձեռքբերումները

- 9 աշխատանքային այց համայնքապետարաններ՝ ապակենտրոնացման գործընթացի և համայնքապետարանների դերի վերաբերյալ մանրամասն քննարկումներով (Էջմիածին, Դեբետ, Թումանյան, Ալագյազ, Տաթև, Սիսիան, Տեղ, Գորիս, Կապան):
- 43 (71-ից) համայնքապետարաններ մասնակցել են Ծրագրի պաշտոնական բացման միջոցառմանը և մասնակցել ապակենտրոնացման հարցերի շուրջ կազմակերպված քննարկմանը:
- 40 համայնքապետարաններ հայտ են ներկայացրել մասնակցելու դեպի Շվեդիա աշխատանքային-ճանաչողական այցին: Ընտրվել են 10-ը (յուրաքանչյուր մարզից մեկական):
- Ընթացում են կլոր սեղան-քննարկումներ տեղական ինքնակառավարման մարտահրավերների և գիտելիքների փոխանակման շուրջ, ինչպես նաև պիլոտային համայնքների ընտրությունը: